Հ. ԷԼՉԻԲԵԿՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԸ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Առանձնատիպ. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
1949 թ. № 2 «Տեղեկագրից»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1949

9(47.925) 27834
Հ-29 Խաչատրյան, Հ.
Աստվածաբանության հայերը Տիզա-
գետքում և նրանց մշակույթը
12/VI-58 9/I-59 18

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1949, № 2 *Общественные науки*

Հ. Էլչիբեկյան

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԸ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը ապրեց իր պատմության ամենառղբերգական էջերից մեկը։ Այդ տարիներին Թուրքական կառավարությունը կանխորեն մշակված ծրագրով, բարբարոսաբար ոչնչացրեց Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի այլ վայրերում ապրող հայերին։ Կայզերական Գերմանիան, որի դաշնակիցն էր Թուրքիան, իր հովանավորության տակ առավ Թուրքական կառավարության այդ ջարդարար քաղաքականությունը։

Արևմտահայերի մի փոքր մասին հաջողվեց ազատվել ջարդերից և անցնել Անդրկովկաս, գլխավորապես Սրևանյան նահանգը։ Դրանք մեծ մասամբ Վասպուրականի, Էրզրումի, ապա Տրապիզոնի կողմերից գաղթված հայերն էին։

Երբ պատերազմի ընթացքում ռուսական բանակը մտավ Արևմտյան Հայաստանի խորքերը՝ նրանք հետզհետե սկսեցին վերադառնալ իրենց հայրենիքը։ Քանի դեռ շարունակվում էր պատերազմը՝ վերադարձը մասսայական բնույթ չէր կարող կրել, ուստի և վերադարձածների թիվը մեծ չէր։ 1918 թ. սկզբին նրանք ստիպված եղան թողնել իրենց հայրենի վայրերն ու նորից անցնել Անդրկովկաս, Կովկասյան ռազմաճակատի զինվորների տուն վերադառնալու կապակցությամբ, որը հետևանք էր անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն պարտիաների վարած հակասովետական քաղաքականության։ Անդրկովկաս եկան Երզնկա, Էրզրում և Արևմտյան Հայաստանի ուրիշ վայրերը վերադարձած արևմտահայերը։

Չկարողացան վերադառնալ վասպուրականցիները, Նրանք ստիպված եղան Վասպուրականից գնալ Պարսկաստան (Իրան), որտեղից փորձեցին պարսկական Ադրբեջանի խոյ գավառի վրայով անցնել Անդրկովկաս, սակայն այդ էլ չհաջողվեց նրանց և Անդրկովկաս անցնելու փոխարեն նրանք՝ մեծ դժվարություններ կրելով ու բազմաթիվ զոհեր տալով, ստիպված եղան գնալ Միջագետք, ուր անդլիական իշխանությունների հսկողության տակ մնացին մինչև 1922 թ., երբ վերջ ի վերջո, շնորհիվ Սովետական Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների ձեռք առած միջոցների, նրանք վերջապես կարողացան վերադառնալ հայրենիք։

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսական բանակը 1915 թ. մայիս ամսին վերցրեց Վանը։ Սակայն նույն թվի հուլիսին նա ստիպված եղավ թողնել այն։ Այդ կապակցությամբ տեղի ունեցավ վասպուրականցիների ծանր նահանջը դեպի Անդրկովկաս։ Վանը թողնելուց մի երկու օր հետո ռուսական բանակը կրկին մտավ քաղաք։ 1915 թ. վերջերից, մանավանդ 1916 թ. սկսած, վասպուրականցիները սկսեցին հետզհետե վերադառ-

նալ հայրենիք։ Վերաղարձածների թիվը քիչ էր— 1918 թ. սկզբին հասնում էր մոտ 25 հազարի։ Պատճառը, ինչպես արդեն մենք նշել ենք, շարունակվող պատերազմն էր։ Վերադարձածները ղլխավորապես ապրում էին Թիմարի, Արճակի, Հայոց-Ձորի շրջաններում և Վանում։ Նրանք եռուն կերպով կպել էին աշխատանքի— վերաշինում էին իրենց քանդված օջախները, վարում էին և ցանում։ 1917 թ. բերքը առատ էր և նրանք իրենց նյութապես ավելի ապահով էին զգում, քան Անդրկովկասում գտնված ժամանակ։

Սակայն դրությունը փոխվում է Կովկասյան ռազմաճակատից ռուսական բանակի վերադառնալուց հետո։ Օգտվելով այդ հանգամանքից, թուրքական բանակը 1918 թ. սկզբին անցնում է հարձակման և փետրվար ամսին վերցնում Երզնկան, Բայբուրդը, Մամախաթունը, իսկ մարտի 1-ին՝ Երզրումը։ Այսպես կոչված հայկական ազգային զորամասերը, որոնց կազմակերպում էր կոմիտոնոլույսին հայկական ազգային խորհուրդը, ի վիճակի չեղան կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը։ Թուրքական զորքերի կողմից վերոհիշյալ գրավված վայրերում ապրող փոքրաթիվ արևմտահայերը կարողանում են ժամանակին հեռանալ դեպի Անդրկովկաս։

Երզրումի անկումից հետո թուրքական զորքերը առաջ են շարժվում նաև Վանի ուղղությամբ։ Անհրաժեշտ էր օր առաջ ժողովրդին ոտքի հանել և ճամբա դնել դեպի Անդրկովկաս, քանի դեռ թուրքական զորքերը չէին կտրել ճանապարհը։ Բայց այդպես չեղավ։ Հայ ժողովրդի սիսերիմ թշնամիների՝ դաշնակների հանցագործ քաղաքականության շնորհիվ վասպուրականցիք ժամանակին չին նահանջում։ Միայն մարտի վերջին օրերին է սկսվում նահանջը, երբ այլևս Անդրկովկաս անցնել հնարավոր չէր, որովհետև թուրքական զորքերը արդեն կտրել էին Վան—Արճեշ—Բերկրի—Բայազետ—Իգդիր ճանապարհը։ Վասպուրականցիներին շատ թանկ նստեց դաշնակների այդ ավանտյուրիստական քաղաքականությունը։

Թուրքերը Վանի վրա հարձակվեցին երկու ուղղությամբ՝ Վանա լճի հյուսիսային և հարավային կողմերից։ Առաջանալով հյուսիսային ուղղությամբ, նրանք 1918 թ. մարտի 24-ին գրավում են Արճեշը։ Հարավային կողմից հարձակվում են Ոստան մեծ գյուղի ուղղությամբ։ Ապրիլի առաջին օրերին գրավում են Վանը։ Անդրկովկաս կարողացան անցնել միայն Բերկրիի մոտիկ գյուղերի բնակիչները և այն վասպուրականցիները, որոնք, տեսնելով զարգացող դեպքերը, գերադասել էին ժամանակին ճամբա ընկնել։ Այս դեպքերի մասնակիցների պատմածների համաձայն Անդրկովկաս անցածների թիվը քիչ էր՝ հինգ հազարից ոչ ավելի։

Բերկրի—Բայազետ—Իգդիր ճանապարհը թուրքական զորքերի կողմից կտրված լինելու պատճառով վասպուրականցիները ստիպված են լինում նահանջել Պարսկաստան։ Համաձայն մասնակիցների պատմածների՝ նահանջողների թիվն էր մոտ 17 հազար հոգի։ Երեք հազար հոգի չկարողացան նահանջել և պատսպարվեցին Լիմ կղզում։ Վանի վալին, հայտնի դահիճ Ջեվդեթբեյը, Վանը վերցնելուց հետո տեղից տեղ փոխադրելով, վերջ ի վերջո կոտորում է այդ երեք հազար հայերին։

Պարսկաստան նահանջող վասպուրականցիները ցանկանում էին խոյի վրայով անցնել Անդրկովկաս։ Պարսկաստանի սահմանը հասնելուն պես նրանք Ղոթուրից դիմում են խոյի պարսկական իշխանություններին և թույլտվություն խնդրում Պարսկաստան անցնելու համար։ Սակայն պարսկական

իշխանությունները դեմ լինելով դրան՝ չեն պատասխանում դիմումին։ Սպասել, նահանջողները չէին կարող, որովհետև նախ՝ վախենում են, որ թուրքական զորքերը կարող են հասնել իրենց և երկրորդ՝ հենց Ղոթուրի մոտ գտնվող մի կիրճում վասպուրականցիք հարձակման են ենթարկվում պարսիկ զինվորների և քրդերի կողմից։ Նահանջողները ստիպված են լինում կռվի մտնել հարձակվողների դեմ։ Վերջ ի վերջո վասպուրականցիները Խոյ-ջայի վրայով անցնում էին սահմանը և մտնում Խոյից հարավ ընկած պարսկական Սալմաստ գավառը, որտեղ և համեմատաբար ավելի ապահով են զգում իրենց։ Սահմանն անցնելու ժամանակ նահանջողների մի փոքր մասը կորցնելով ճանապարհը, ընկնում է Խոյ։ Դրանցից քչերը վերադարձան Սալմաստ և միայն նահանջողներին։

Սալմաստում և նրա հարևան Ուրմիա գավառում 1918 թ. մարտին կռիվներ էին տեղի ունեցել մի կողմից նեստորական ասորիների, իսկ մյուս կողմից պարսկական տեղական իշխանությունների և քրդերի միջև։ Նեստորական ասորիները, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ապրում էին Վանի վիլայեթում, Ջուլամերիկի լեռներում։ Երբ 1915 թ. գարնանը երիտասարդ թուրքերի կառավարությունն սկսում է արևմտահայերի կոտորածները, նրանք էլ իրենց ապահով չեն զգում և մոտ 40 հազար ասորիներ անցնում են Պարսկաստան ու բնակություն հաստատում Սալմաստ և Ուրմիա գավառներում։ Ռուսական բանակը 1918 թ. սկզբին Պարսկաստանից հեռանալուց հետո պարսկական իշխանությունները փորձում են նեստորական ասորիներին հեռացնել Պարսկաստանից։ Ասորիները զինվում են ու չեն ենթարկվում պարսկական իշխանությունների կարգադրություններին։ Սկսվում են ընդհարումներ ասորիների և պարսկական իշխանությունների միջև։ Վերջիններին չի հաջողվում իրագործել իրենց մտադրությունը ասորիների նկատմամբ։ 1918 թ. մարտին հայտնի քուրդ ցեղապետ Սմկոն Սալմաստում սպանում է նեստորական ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմոն-Բենյամինին։ Կռիվներ են սկսվում ասորիների և քրդերի միջև։ Սալմաստի և Ուրմիայի հայերը չեն ուզում մասնակցել այդ կռիվներին, բայց որովհետև Սմկոն ընդհանրապես կռիվ է հայտարարում քրիստոնյաներին, հետևաբար նրանք էլ ստիպված են լինում ինքնապաշտպանության նպատակով միանալ ասորիներին։ Սմկոն պարտվում է, փիրավորվում և փախչում Խոյ։

Սակայն հայերը և ասորիները Սալմաստում և Ուրմիայում իրենց երկար ապահով դրել չէին կարող։ 1918 թ. ապրիլին թուրքական զորքերը մտնում են Պարսկաստան և վերցնում Խոյը։ Այդպիսով նրանք կտրում են նաև Սալմաստից և Ուրմիայից Անդրկովկաս տանող ճանապարհը։ Այնուհետև նրանք վերցնում են և Թավրիզը։ Սկսվում են կռիվներ մի կողմից թուրքական զորքերի և մյուս կողմից դաշնակների հանցանքով Պարսկաստան ընկած վասպուրականցիների ու տեղական հայերի և ասորիների միջև։ Կռիվները տևում են մինչև 1918 թ. հուլիսի առաջին օրերը։ Թուրքական զորքերի հրամանատարությունը փորձում է Սալմաստը և Ուրմիան շրջապատել նեղ օղակի մեջ և ոչնչացնել հայերին ու ասորիներին։ Վերջիններս ցույց են տալիս ուժեղ դիմադրություն և թուրքական հրամանատարությունը ի վիճակի չի լինում իրագործել իր մտադրությունը։

Հայերը և ասորիները Անդրկովկաս անցնելու նպատակով որոշում են վերցնել Խոյը, բայց այդ նրանց չի հաջողվում։ Կորցնելով Անդրկովկաս ընկ-

նելու իրենց հույսը, նրանք ստիպված են լինում նահանջել դեպի հարավային Պարսկաստան, ուր գտնվում էին անգլիական զորքերը։ Թուրքական զորքերն սկսում են հետապնդել նահանջողներին։ Որպեսզի հնարավորություն տան Ուրմիայի հայերին և ասորիներին միանալ իրենց, նահանջողները հետապնդող թուրքական զորքերին կռվով կանգնեցնում են Ուրմիա գյուղաքաղաքի մոտերը։

Կռիվների ընթացքում թուրքական զորքերի հրամանատարը մի գրություն է ուղարկում նահանջողներին, հայտնում է նրանց գաշնակցական կառավարության կազմակերպման մասին և առաջարկում հայերին վերադառնալ Հայաստան, ըստ որում հայերը պիտի վերադառնային խմբերով և անզեն։ Վերադարձողների յուրաքանչյուր խումբ պիտի բաղկացած լիներ ոչ ավելի 50 հոգուց։ Թուրքական հրամանատարի ծրարում լինում է և գաշնակցական կառավարության ներկայացուցչի նամակը, որն իր հերթին ևս նույն խորհուրդն էր տալիս հայերին։ Սակայն հայերը մերժում են այդ առաջարկը, որովհետև ոչ մի երաշխիք չկար, որ թուրքերը չէին ոչնչացնի փոքրաթիվ խմբերով փոխադրվող անզեն հայերին, մանավանդ, որ նրանց փոխադրումը 50-ական հոգով պիտի ձգձգվեր։

Մերժում ստանալով, թուրքական զորքերը վերսկսում են հարձակումը։ Հայերին և ասորիներին հաջողվում է ետ մղել թուրքերին քրդական Ռեանդուզ մեծ գյուղի կողմը և շարունակել նահանջը դեպի հարավ։ Նահանջողների թիվը մի տվյալի համաձայն հասնում էր մոտ 60 հազարի։ Այստեղ կային հայեր Վասպուրականից, Խոյից, Սալմաստից և Ուրմիայից, ինչպես և բավական թվով ասորիներ։

Հարավային Պարսկաստանում գտնվող անգլիական զինվորական իշխանությունները ուշադրությամբ հետևում էին Խոյում, Սալմաստում և Ուրմիայում ծավալվող դեպքերին։ 1918 թ. հունիսի վերջերին անգլիական մի ավտոնակ Ուրմիայում վայրէջք է կատարում նահանջողների մոտ։ Ավտոնակում գտնվող անգլիական սպան հայտնում է, որ անգլիական առաջապահները գտնվում են Միանե քաղաքում և խորհուրդ է տալիս նահանջողներին գնալ դեպի հարավ— Սակի-Կալե ու, խոստանում է ռազմամթերք հասցնել նրանց։ Ինչպես մենք հիմա կանենանք, ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանել սիրող անգլիական իմպերիալիստները նահանջողներին արդեն դիտում էին որպես իրենց զինվորների։

1918 թ. օգոստոսի առաջին օրերին նահանջողները հասնում են Համադան, բայց քաղաք չեն մտնում։ Անգլիացիք նրանց տանում են Համադանից հարավ գտնվող Թեզեքենդ ամայի գյուղը, ուր բոլորին զինաթափում են, բացի նրանցից, որոնք ցանկություն են հայտնում մտնել անգլիական զորքերի շարքերը։ Հայերից մոտ հազար հոգի մտնում են անգլիական բանակը։ Մտնում են և ասորիներից։ Երկու ամիս նրանց վարժեցնելուց հետո անգլիացիք ուղարկում են կռվելու թուրքերի դեմ։ Մյուսներին փոխադրում են Միջագետք ու տեղավորում Բաղդադից ոչ հեռու, Բարութի արաբական գյուղաքաղաքի մոտ, Դիալա գետի աջ ափին, հատուկ կազմակերպված ճամբարում։

Թե ինչքան մարդ հասավ Բարութի՝ դժվար է ճիշտ ասել։ Այնտեղ գտնվողները պատմում են, որ 1919 թ. Բարութիում գտնվում էին մոտ 10 հազար վասպուրականցիներ, 5—6 հազար հայեր Խոյից և Ուրմիայից ու 3 հազար

հոգի թուրքական իշխանությունների կողմից առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դեպի Միջագետք բշված արևմտահայերից։ Այսպիսով հայերի թիվը հասնում էր 18—19 հազարի։ Ասորիների թիվն էր մոտ 32.000։ Բոլորը ապրում էին վրանների տակ։ Հայերը և ասորիները առանձին էին ապրում։ 25—35 վրաններ մի խումբ էին կազմում, որ ուներ իր ղեկավարը՝ հայ կամ ասորի։ Ղեկավարը միջնորդ էր հանդիսանում անգլիական իշխանությունների և իր հանդուրժյան տակ ապրողների միջև։ Անգլիական իշխանությունները փախստականներին բաց էին թողնում շնչին բանակությամբ մթերք, որով ապրելը հնարավոր չէր։ Ճամբարում ապրողներին արգելվում էր աշխատելու համար Բաքուբե, Բաղդադ և կամ որևէ այլ վայր գնալ։ Փախստականներին տրվող մթերքի դիմաց անգլիական իշխանությունների կարգադրությամբ տղամարդկանց մի մասը ձրի աշխատում էր երկաթուղու վրա։

Անգլիական իմպերիալիստներն այդ տարիներին դեռ իրենց ամուր չէին զգում Միջագետքում։ Երկրում ուժեղ էր արաբների պայքարը անգլիական գաղութարարների դեմ։ 1919—1920 թ. թ. Միջագետքում տեղի են ունենում ուժեղ ելույթներ անգլիական իմպերիալիստների դեմ։ Անգլիական զավթիչները իրենց տիրապետությունն ամրապնդելու համար փորձում են կիրառել իրենց «ժամանակ, որ տիրես» հին քաղաքականությունը և դիմում են հրեշավոր քայլի— ցանկանում են իրենց հանդուրժյան տակ գտնվող այդ մի բուռն հայերին և ասորիներին թողնել Միջագետքում, կապել հոգի հետ, իսկ ղենք կրելու ընդունակներին վերցնել անգլիական գաղութային զորքերի շարքերը և այսպիսով հայերին ու ասորիներին հակադրել արաբներին։

1921 թ. վերջերին Սովետական Հայաստանի Բաթումիի ներկայացուցիչը զեկուցագիր է ստանում Միջագետքում գտնվող փախստականների դրության և նրանց նկատմամբ անգլիական իշխանությունների վարած քաղաքականության մասին։ Զեկուցագրի մեջ նկարագրվում է այն բոլորը, ինչ պատահել է Միջագետք ընկած հայերի հետ 1921 թ. մարտից սկսած։ Փախստականներին Միջագետքում թողնելու, նրանց հողի հետ կապելու անգլիական ծրագրի մասին, զեկուցագրում ասվում է. «... Անգլիական կառավարության նպատակն է Միջագետքը քրիստոնյա տարրերով լցնել, հակակշռի տակ պահելու համար արաբներին քրիստոնյա բնակիչների անունից։ Ասոր համար գաղթականները ուրիշ կրկին փորձ պիտի լինի ցրելու Միջագետքի մեջ»[1]

Ճամբարում ապրողների դրության մասին զեկուցագրում կարդում ենք. «Անգլիական կառավարությունն այս երեք տարվա ընթացքում չթողեց գաղթականներին քեմփեն (ճամբարից— Հ. Է.) հեռանային։ Դաղտագողի փախչողներ, որոնք Բաղդատ կամ Պասրա գործ ճարելու կերթային՝ եթե հաջողվեր կառավարության նրանց բռնելու՝ 30 օրվա բանտարկության և ստժանակիր աշխատանքի կենթարկեր։ Եթե չհաջողվեր բռնել՝ ընտանիքներին քեմփեն կվռնդեր տղամարդկանց ետևեն։ Այս սարսափի տակ գաղթականները մնացին քեմփի մեջ պարապ՝ առանց գործի, աչք տնկելով կառավարության տված ամ մը այլուրին»[2] Նման քաղաքականությամբ անգլիական իշխանությունները ցանկանում էին հուսահատեցնել փախստականներին և կապել նրանց հողի հետ Միջագետքում։

Դեռ 1920 թ. ապրիլին անգլիական իշխանությունները պահանջում են

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆոնդ 51, գործ 40, էջ 1—11։
[2] Նույն տեղում։

փախստական հայերից, որ կամ դաշնակցական կառավարությունը կարգադրություն անի ներդաղթի մասին, կամ գաղթականները համաձայնվեն երեք տարի մնալ Միջագետքում և կապվել հողի հետ։ Հայերը չեն համաձայնում և իրենց ցանկությունն են հայտնում, ինչ գնով էլ լինի, վերադառնալ Անդրկովկաս, անգամ ոտքով Պարսկաստանի վրայով, ինչպես իրենք էին ասում, «նուշնիսկ մահվան գնով»։

Դաշնակցական կառավարությունը չօգնեց հենց իրենց՝ դաշնակների հանցանքով Միջագետքում տառապող հայերին։ Չօգնեց և Պոլսի հայկական պատրիարքարանը, որին մի քանի անգամ դիմեցին փախստականները։ Ինչ վերաբերում է փախստականներին օգնություն ցույց տալու ցուցանակի տակ Բաղդադում կազմակերպված կոմիտեին, ապա նա զբաղված էր փախստականների անունով ստացվող դումարները յուրացնելով և վատնելով։ Այդ մասին հիշված զեկուցագրում ասվում է հետևյալը. «Իսկ Միջագետքի մեր ազգային մարմինները փոխանակ օգտակար լինելու այս գաղթականության, ընդհակառակը՝ միշտ չարիք են հանդիսացել։

Բաղդադի «Տարագրելոց մարմինը» մեր գաղթականության և որբերի անունով հանգանակություն կատարեց Հնդկաստանի և Ջավայի մեջ հանձինս իր ատենապետ Մարտիրոս Գուլումճյանի և հավաքեց 90.000 ռուպի[1] Հնդկաստանեն, 200.000 ֆրանկ Ջավայեն, բայց բացի 6000 ռուպիեն չծախսեց այդ գաղթականության վրա (6000 ռուպին կառավարության միջոցով հնդիկ բանվորներից հնամաշ և գործածությունեն դադրած լաթեր գնեց, որու 2/3 մասը հետ վերադարձվեց)։ Որբերի բյուջեն արդեն եգիպտոսի որբանոցեն կստանային։ Այդ հակայական դումարը փշացրին առանց հաշիվ տալու գաղթականության, չնայած քանիցս պահանջվեց այդ»[2]

Հայերին, ասորիներին և արաբներին միմյանց հակադրելու անգլիական դիվային քաղաքականության հետևանքով, ինչպես և քեմալականների ագիտացիայի ազդեցության տակ, ապստամբ արաբները, որոնք վերցրել էին Բաքուբեն, 1920 թ. օգոստոսի 10-ից մինչև 18-ը շրջապատում են փախստականների ճամբարը և կռվի բռնվում նրանց հետ։ Այդ դեպքից հետո փախստականները Բաքուբեից փոխադրվում են Բասրայի մոտերքը, հույս ունենալով ծովով փոխադրվել Հայաստան։ Սակայն շուտով նրանք լսում են քեմալական Թուրքիայի և դաշնակցական Հայաստանի միջև ծագած պատերազմի, ապա՝ թուրքական զորքերի կողմից Կարսի և Ալեքսանդրապոլի գրավման լուրը։ Վասպուրականցիներին թվում էր, թե այլևս Հայաստան վերադարձ չկա։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման լուրը լցնում է նրանց սիրտը հայրենիք վերադառնալու հույսով։ Այդ ժամանակ Միջագետքում մնացել էին մեծ մասամբ հայերը։ Ասորիները հեռացել և հեռանում էին Պարսկաստանի հարավային մասերը։

1921 թ. մարտ ամսին Միջագետքի անգլիական իշխանությունները հայտարարում են, որ ապրիլից փախստականներին այլևս նյութական օգնություն ցույց չի տրվերու։ «... Անգլիական կառավարության կողմեն,— կարդում ենք արդեն հիշված զեկուցագրում,— որոշվեց փախստականներին տեղավորել

---

1 Հնդկաստանում գործածվող արծաթե դրամ։ 1919 թ. հավասար էր մոտ 60 կ. ոսկով։

2 Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆոնդ 51, գործ 40, էջ 1—11։

Եփրատ գետի եզերքին (Բասրայի նահանգի մեջ), երկրագործությամբ զբաղվելու համար»[1]

Անգլիական իշխանությունների հայտարարության համաձայն, փախստականները երկրագործությամբ զբաղվելով, իբր թե հնարավորություն կունենային փոքր վաստակել և վերադառնալ հայրենիք։ Սակայն, իրականում, անգլիական իմպերիալիստները խաբում էին հայերին, նրանք բոլորովին չէին ցանկանում, որ հայերը վերադառնան հայրենիք։ Անգլիական իշխանությունները հետապնդում էին իրենց նպատակը՝ պահել նրանց Միջագետքում և կապել հողի հետ։ «... Հողին կապելով,— կարդում ենք զեկուցագրում,— մոտավորապես 4—5 տարի նա (գաղթականությունը— Հ. Ի.) պարտավորված պիտի մնար հոն։ Օգը շափազանց շոգ, հողը երկրագործության համար— գոնե առաջին երկու տարիներու համար— անոգաստ և... ոչ միայն շորս, այլ տաս տարի հետո գաղթականությունը կողեկ շափահ ունենար իր դրպանը, որպեսզի իր ծախսով հայրենիք փոխադրվեր»[2]

Հայերը հասկանում են անգլիական իմպերիալիստների այդ հրեշավոր խաղը և վճռականորեն հրաժարվում են ցրվել Միջագետքում ու կապվել հողի հետ։

1921 թ. հուլիսին Միջագետքի անգլիական իշխանությունները սկսում են հեռացնել հայերին ճամբարից։ Ինչպես հայտնում էին Թեհրանից ուղարկված մի թղթակցությունում՝ «Հուլիսի 20-ից անգլիացիների կողմից դադարեցված է մեր գաղթականության տրված մթերքները, ժողովուրդը մատնելով աներևակայելի տնտեսական ճգնաժամի։

Սրանով ալ չբավականանալով, նրանք գաղթականության հավաքականությունը միանգամայն անտանելի դարձնելու համար վերցրել են... ջրի խողովակները։ Փորձել են վերցնել նաև վրանները, բայց կին ու երեխաների դառնագին խնդրանքի վրա մի քանի օրով հետաձգվել է այդ»։ Այնուհետև թղթակցությունում ասվում էր, որ անգլիական իմպերիալիստները փախստականներին «... հետին մտքերով ձգտում են կապել իրենց համար անհարազատ և օտար հողին՝ խեղդելով նրանց մեջ հայրենիք վերադառնալու իդեալը»։[3]

Ստեղծված դրության պատճառով փախստականներն սկսում են հեռանալ ճամբարից։ «Գաղթականությունը,— ասվում է արդեն մեզ ծանոթ զեկուցագրում,— սկսեց փախչիլ Բասրա՝ գործ ճարելու համար, առանց կառավարության թույլտվության։ Սակայն Բասրայի մեջ մեր գաղթականները տեղի լեզուն չիմանալու համար շարաթներով դես ու դեն կթափառին հուսահատ... և քմմի կվերադառնան։ Գործի կրնվին միայն 10—15 տարեկան երեխաները՝ արաբների և քրիստոնյաների մեջ...»։[4]

Օգոստոս ամսին Միջագետքի անգլիական բարձր կոմիսարի կողմից մի գնդապետ է դալիս ճամբար՝ փախստականների հարցը լուծելու համար։ Գնդապետն առաջարկում է փախստականներին աշխատել Բասրայի շրջանում։ Փախստականները հայտնում են, որ իրենք չեն ցանկանում ծանրանալ անգլիական կառավարության վրա, որ պատրաստ են աշխատելու կառավարության կողմից առաջարկված աշխատանքում, բայց չեն ցրվելու Միջագետքում

---

1 Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆոնդ 51, գործ 40 էջ 1—11։

2 Նույն տեղում։

3 «Խորհրդային Հայաստան», № 201, 1921 թ., 21 հոկտեմբերի։

4 Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆոնդ 51, գործ 40, էջ 1—11։

և աշխատանքը պիտի լինի ժամանակավոր, որովհետև նրանք վերադառնալու են հայրենիք։ Իմանալով փախստականների ցանկությունը, գնդապետը վերջնական պատասխան չտալով՝ վերադառնում և իր կողմից մի երկու օրից հետո ուղարկում է մի ուրիշ զինվորականի, որը ճամբար գալով, կրկին առաջարկում է փախստականներին աշխատել Միջագետքի զանազան վայրերում։ Փախստականները նույն պատասխանն են տալիս, ինչ տվել էին գնդապետին։ Անգլիական զինվորականը փորձում է հուսահատեցնել փախստականներին, պրովոկացիոն հայտարարություն անելով, ինչպես այդ իմանում ենք զեկուցագրից, որ «ձեր հայրենիքին հույսը կտրեցեք հիմակու հիմա» և «պետք է գաղթականությունը ցրվի Միջագետքի մեջ, բայց Բասրայի շրջան աշխատենք տեղավորացնել»։

Այս բոլորի հետևանքով «գաղթականությունը,— ասվում է զեկուցագրում,— ծայր աստիճան հուսահատության մատնվեց... Շատերն իրենց ընտանիքներն առին և քեմփեն հեռացան Բասրա և այլ տեղեր ապրելու (ասենք արհեստավոր մարդիկ էին՝ ընդամենը ընտանիքներով միասին 4—500 անձ), 500 անձ ճարահատված Մոսուլ ընտրեց գնալ և կառավարությունն անենց հոն տարավ (սրանք հետո ճամբար են վերադառնում— Հ. Է.), պարսկահայերը 2000 անձ... գնացին Բաղդադ, Բաղդադից Պարսկաստան առանց որևէ օժանդակության։ Իսկ մնացած 9890 անձ մնացին քեմփի մեջ սոված վիճակի մեջ։ Գաղթականությունը մի անգամ կառավարության հայտնած էր, որ «կուզեն մեռնել քեմփի մեջ հավաքական կերպով, քան թե ցրվել Միջագետքում»։[2]

Այնուհետև անգլիական իշխանությունները վերջնականապես հայտարարում են փախստականներին, որ նրանք պիտի ցրվեն Միջագետքում՝ գնան Բաղդադ, Մոսուլ, Սուլեյմանիե և ուրիշ վայրեր։ Անգլիական իշխանությունների այս կարգադրությունը իրենց հաղորդելիս «ժողովուրդը միաբերան,— իմանում ենք զեկուցագրից,— ասաղակեց՝ «Մեզ մեր երկիրը տար, հոն մեր եղբայրների կողքին մեռնենք, կամ ապրենք հոն՝ մեր հայրենիքի մեջ»։ Այս անգամ կառավարությունը բոլորովին ձեռք բաշեց ժողովուրդը Միջագետք ցրելու ծրագրեն, իսկ գաղթականությունն ալ մնաց իր բախտին»։[3]

Միջագետքում տառապող հայերը իրենց ազատագրումը իրենց հայրենիքից՝ Սովետական Հայաստանից էին սպասում, Եվ նրանք չէին սխալվում։ Սովետական Հայաստանի և Սովետական Ռուսաստանի կառավարությունները նրանց օգնության հասան։

1921 թ. հոկտեմբերին Սովետական Հայաստանի Կառավարության Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսար Ա. Մռավյանը դիմեց Անգլիայի Արտաքին Գործերի մինիստր լորդ Քերզոնին մի նոտայով, ուր ասվում էր, որ Սովետական Հայաստանի կառավարությունը ստույգ տեղեկություններ ունի Միջագետքում գտնվող գաղթականության աղետալի դրության մասին, որը հետևանք է անգլիական իշխանությունների կողմից վարած քաղաքականության և որ անհրաժեշտ է կատարել գաղթականության իրձը՝ փոխադրել նրան Բաթումի, որպեսզի Սովետական Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղավորել նրան իր սահմաններում։[3]

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ. Ֆոնդ 51, գործ 40, էջ 1—11։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

Դաշինակցության օգնություն ցույց տվեց և Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ 1921 թ. հոկտեմբերին Սովետական Հայաստանի կառավարությունը խնդրեց Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաներին կից Սովետական Ռուսաստանի ներկայացուցչին, որպեսզի վերջինս Սովետական Ռուսաստանի Թեհրանի ներկայացուցչի միջոցով օգնություն ցույց տա Միջագետքից Պարսկաստան անցած փախստականներին։ Սովետական Հայաստանի կառավարության կողմից այդ առթիվ արված դիմումում նկարագրվում էր, թե ինչպես վասպուրականցիք «... վերցնելով իրենց հետ խոյի և Ուրմիայի շրջանների հայերին և ասորիներին, երկար փոքանքներից հետո հասան Բաղդադ, հաղարավոր վերստ ճանապարհը ծածկելով հաղարավոր դիակներով։ Հասնելով Միջագետք, անգլիական իշխանությունները աշխատեցին օգտագործել փախստականներին իրենց նպատակների համար— զենք կրելու ընդունակներից կազմակերպեցին հատուկ ջոկատներ արաբներին և թուրքերին հակադրելու համար, իսկ մնացածներին՝ ճանապարհներ անցկացնելու և վերանորոգելու համար։

Այդ փախստականները տեղավորվել էին Բաբուբելում, Ճամբարում, ոչ հեռու Բաղդադից և ամենածանր պայմաններում ապրեցին մինչև 1920 թ. սեպտեմբերը, որից հետո նրանք տեղափոխվեցին Նահր-էլ-Օմար, Բասրայի մոտ, մտադրվելով ծովով մեկնել Կովկաս, բայց թուրքերի հարձակումը և Կարսի ու Ալեքսանդրապոլի գրավումը կանգնեցրին նրանց։

Ամբողջ դաղութը այժմ կազմված է 12 հազար հոգուց... Որպեսզի նրանք (փախստականները— Հ. Ի.) չմեռնեն սովից՝ հեռանում են Միջագետքից, և անապատներով անցնում հարյուրավոր վերստեր դլխավորապես դեպի Համադան և այնուհետև դեպի Պարսկաստանի խորքերը։

Պարզ է, որ այդ դժբախտների կեսից ավելին մահվան է դատապարտված այդ ծանր ճանապարհին։

Հայկական ՍՍՌ կառավարությունը խնդրում է ՁԵՂ ՌՍՖՍՌ Թեհրանի ներկայացուցչի միջոցով որոշ մասնակցություն ցույց տալ նրան՝ Պարսկաստանի համար շրջաններում տեղավորելու գործում, մինչև որ գարնան հնարավոր կլինի նրանց բնակեցնել Հայաստանում»։[1]

Այդ օգնությունը նրանց ցույց է տրվում, Պարսկաստան անցած փախստականներն ստանում են նյութական օգնություն ու չեն ցրվում Պարսկաստանի մեջ։ Օգնություն են ստանում և Միջագետքում գտնվող փախստականները։

Վասպուրականցիք և նրանց միացած ուրիշ հայերը 1922-ին վերադառնում են իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան և ստանում լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ ու կապվում հողի հետ, փոխանակ մնալու Միջագետքում, ինչպես այդ ցանկանում էին անել անգլիական իմպերիալիստները։

Միջագետքից վերադարձածները առաջիններն էին այն բազմահազար հայերից, որոնք դեպերում էին օտար հորիզոնների տակ։ Վերադարձը շարունակվեց և հաջորդ տարիներին։ Շնորհիվ ՍՍՌ Միության կառավարության կողմից

---

[1] Այդ մասին տես Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆոնդ 4—114, գործ 16, թ. 89։

ձեռք առնված միջոցառումների, 1946 թ. հետո Սովետական Հայաստան եկան տասնյակ հազարավոր հայեր։ Իրագործվեց օտարության մեջ տառապող հայերի իղձը՝ ապրել ու աշխատել իրենց հայրենիքում։ «... Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերս,— գրում էին վերադարձողները հայ ժողովրդի լավագույն բարեկամ ընկեր Ի. Վ. Ստալինին,— հայտնում ենք Ձեզ, մեծ մարդասերիդ, մեր խորին երախտագիտությունն այն բանի համար, որ Դուք հնարավոր դարձրիք մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու վերաբերյալ օտարության մեջ ապրող հայերիս վաղուցվա իղձերի իրագործումը»։

27234
A II 33361

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220033361

(204)

A II 33361